

ազատուելու եւ քրիստոնեայ պետութիւններու օգնութիւնովն իր գահը նորէն ձեռք բերելու : Այս նպատակով ալ նամակներ կը գրէր պետութիւններու եւ անոնց գթութիւնը կը հայցէր : Սուլտանն այս մասին կը կասկածէր Լեւոնէն. ուստի անոր ազատութեան համար եւրոպական պետութիւններու կողմէ հաւանական ամէն միջամտութիւն չէզոքացնելու համար՝ սուլտաններու յատուկ խորամանկութիւնով՝ Լեւոնի ձեռքէն գոհունակութեան թուղթ մը առաւ, որով Լեւոն — հակառակ իր կամքին — գոհունակութիւն կը յայտնէր իր վիճակէն եւ կը փափագէր մինչեւ իր կեանքին վերջը մնալ հոն . . .

Լեւոնի դիմումներուն հետեւանքն այն եղաւ, որ Կիպրոսի թագաւորը մասնաւոր նամակ մը գրելով սուլտանին՝ աղաչեց ազատ արձակել Հայոց թագաւորը : Մի եւ նոյն դիմումն ըրին նաեւ Գրիգոր ԺԱ. պապը (1), Նէապոլսի Յովհաննա թագուհին եւ Կոստանդնուպոլսի կայսրը . բայց ասոնց եւ ո՛չ մէկին բարեխօսութիւնն արդիւնք ունեցաւ. վասն զի սուլտանը բոլորին ալ կը պատասխանէր, թէ Լեւոն գոհ է իր վիճակէն եւ թէ ի՛ր իսկական ձեռագրով թուղթ մը առած է իրեն (սուլտանին)՝ փափագ յայտնելով մինչեւ իր կեանքին վերջը մնալ Կահիրէի մէջ . . .

Լեւոնի գերութեան երրորդ տարին Եգիպտոսի մէջ յեղափոխութիւն մը ծագեցաւ, եւ այդ միջոցին սուլտանը խեղզամահ ըրին իր պալատին մէջ (15 մարտ 1377) : Եգիպտական թագաւորութիւնը յանձնուեցաւ Մէլիք

մեջ պսրեկու եւ ուզած կեանքը վարելու ամեն ազատութիւն կը վայելէր, բայց միայն Կանիրեէն դուրս չէր կրնար ելլել, ինչպէս քսի վերն ալ (Եր. 57) : Լեւոնի բանսարկուած չղլալուն ապացոյց է նաեւ այն, որ երբ սուլտանի կողմէ Տաւրիմուր Լեւոնի կառաջարկէր զոհունակութեան քուղը մը տալ, անկիւ մերժեց նախապէս, բայց ետէն տեղի տուաւ *բանսարկուեցու* վախէն ստիպուած : (Դարդել, Եր. 156) : Ուրիշ տեղ ալ Դարդել կրտէ, թէ Լեւոն ազատ կերպով եկեղեցի կը յանձնէր եւ իրեն համար մասնաւոր պատարագի խորհուրդ կասարել կուսար, կը բղթակէր եւրոպական վեհապետներու հետ եւ Պաղեստին գացող ուխտաւորներու այցելութիւնը կընդունէր : (Անդ, Եր. 158-159) : Դարձեալ Դարդել կը գրէ, որ երբ սուլտանը Լեւոնին ազատութիւն շնորհեց, Լեւոն « յապարանս իւր » վերադարձաւ իր բախսակից ընկերներն ալ ազատելու համար . (Դարդել, Եր. 184) : Պարզ է թէ *բանսարկուած* մեկը չէր կրնար « ապարանս » ունենալ :

(1) Ըստ Դարդելի, Եր. 164 : Այս բղթին պատճենն եւ յիշատակութիւնը չկրցի գտնել պապերու բղթերը պարունակող *Եկեղեցական տարեգիրք* (*Annales ecclesiastici*) կոչուած մեծ եւ բազմահատոր հաւաքածոյին մէջ :